ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վրաստանի և Իմերխեի Հայոց վիճակային կանխաւորական կը ծանուցանէ ԹԻՖԼԻՍԻ Հայազգի բարեպաշտուն ժողովրդին թէ՝ կարգադրած է ներկայ ամսոյս 12-ին ՇԱԲԱԹ օրը, առաւօտեան 11-րդ ժամին տանել վիճակիս ի ձեր հանգուցեալ ՍԻՐԱԶԱՆ ԱՒԱԶՅԱՆՑԻՒՆ մարմինը իր բնակարանից ՎԱՆՔԻ ՄԱՏՐՈՆԱԿԱՆԻՆ, և հետեւեալ օրը յետ պատարագին, որ կը սկսուի առաւօտեան ժ. 11-ից, կատարել թաղման հանդէսը նոյն եկեղեցւոյ գաւթում:

10—10

Պ. ԱԴԱՄԵԱՆԸ ցանկանում է ԴՈՒԱՐԻՈՒՆԹԱՆ և գոյների բարձրագոյն ԴԱՍԱՐԱՆԻ դասեր տալ: Պայմանների մասին կարելի է նրա հետ խօսել նրա բնակարանում, Վօլոմինսկի պրօսպէկտի վրայ, Մուխրանովա տանը, Կալուի տակ, առաւօտները 10—12 ժամ, և երեկոները 5—8 ժամ: Դասերը կարող է տալ թէ իր բնակարանում և ցանկացողների տները այցելելով: Նշենպէս ընդունում է պատուէրներ կենդանագրերի նկարելու համար:

10—10

ՆԵՐԿԱՅ 1880 ԹՒԻՄ ԿԸ ՏՊԱԳՐՒԻ

„ԿԱՅԾԵՐ“

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԱՆԱՉԻՑ

Հեղինակութիւն ԸՆԾԻՒ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրուած երեսներ: Ըմէն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: ՄԷԿ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունւում:

Ստորագրել կարելի է ԴԻՒՐԻՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «ՄՇԱԿԻ» խմբագրատունը Ց. ՄԻՒԼԼԻՔ-ՑԱԿՈՐԵՆՑԻՆ:

Մանուլի տակից դուրս եկաւ գեղեցիկ Բօկի «Աւազանի առակներ»-ի թարգմանութիւնը: Բոլոր պահեստը գտնւում է Զաքարիա Գրիգորեանցի Կովկասեան Դրամատունում: Գինն է 35 կոպ.

Մի վարժուհի, որ վկայական ունի և գիտէ ՌՈՒՍԱՑ, ՖՐԱՆՍԻԶԵՐԷՆ և ԳԵՐՄԱՆԵՐԷՆ լեզուները, դասեր է տալիս: Հասցէն կ՚ասէ նդատնտկայ փողոց, տուն Շահմուրադովի № 23:

3—4 (2)

Դուրս եկաւ մանուլի տակից և ՆԱԽՎԱՐԻՄ է թէ կենդրօնական և թէ Ջ. ԳՐԻՒՐՈՒԵՆՆի գրավաճառանոցներում և պ. Մատուրեանի խանութում «ՔԵՐԹՈՒՈՒԱԾՔ և ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ, պ. Ն. ԱԴԱՄԵԱՆի, Տրատարակութիւն Ս. Ագեղեանց: Գրքրը բաղկացած է 243 ԵՐԵՄՆԵՐԻՑ: Գինն է 1 ր. 25 կ.:

4—5

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՏՐԱԿԱՆ ՎԱՃԱՌԱԿԱՏԻՐՆԵՐ յայտնում են I և II գիլդիայի վաճառականներին, որ 1) ներկայ ապրիլի 24-ին առաւօտեան 11 ժամին, առևտրական Վարչութեան բնակարանի մէջ Ագարէգովի (Խատամանովի) տանը պէտք է լինին Առևտրական Վարչութեան ԳԱՆՁՈՒՆԴԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ընտրելիները: Պէտք է ընտրուին մի ՆԱԽԱԳԱՀ, նախագահի մի ԸՆԿԵՐ և երկու ԱՆԴԱՄՆԵՐ: 2) որ ընտրելիներին մասնակցելու իրաւունք ունեն առևտրի վաճառականները (յօդ. 84 առևտրական իրաւունքի Հարկերի գլօժժնիայի), բացի անձինքներից, որոնք ըստ հանրապետ իրաւունք չունեն ընտրելիներին մասնակցելու, օրինակ 25 տարեկան հասակին չը հասածները, յանցաւորների պատճառով դատաստանին ենթարկվածները և այլն:

2—3

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒԱՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գաւթօնակի կանանց հիւանդ. Փօլիկլինիկ ներքին հ., Բօտխինանց կանանց և երեխաների հ., Ջիւղաթանց խերուրգիական և աչքերի հ., Նահմրօրակի վիներական և կաշու հ., Բարեյաղթ ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկովիչ խերուրգիական հ., Վզօրով վիներական և բղոագի հ., Բէյլա աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ. Կրասնօգլազով, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Բուգօվսկի ներքին հ., Նահմրօրակի վիներական և կաշու հ., Ամառուձաձուրօվ կանանց հիւանդութիւններ:

Հինգշաբթի. Վզօրով վիներական և բղոագի հ., Բօտխինանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Ջիւղաթանց աչքերի և ականջների հ.:

Ուրբաթ. Գաւթօնակի կանանց հ., Մինկովիչ խերուրգիական հ., Կրասնօգլազով և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Նահմրօրակի վիներական և կաշու հ., Բարեյաղթ ջղային և հոգեկան հ.:

Շաբաթ. Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բարով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ ազգատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բարեյաղթ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնւում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առաջնորդ Օրբելեան աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

Մ. Մխիթարեանց իներջոյ հիշեալ տպագրութիւնների ամէն մի տպագրութեան ծախսած բոլոր օրինակները միասին գնողներին (Թիֆլիս, Հայոց Վանքի Մեծ և փոքր փողոցների անկիւնում, տպագրոյն սեպհական տանը, № 42, բնակարան № 6) կը վաճառուին յետագայ գներով:

1. Հայկական Բնար, երգարան, 8 ծալ, եր. 712 և առանձին 32 եր. այբբենական ցանկ, երկուսը միասին . . . . . 70 կ.

4 Հազար օրինակից ծացել է մօտ հազար օրինակ, մօտ 700 րուբլու:

2. Կանոնաւոր և վայելուչ գրութեան պատուիրանը և տեսութիւնը, զանազան առանձին յաւելուածներով, 8 ծալ, եր. 274 . . . . . 20 կ.

1200 օրինակից ծաւալ է մօտ 700 օրինակ, մօտ 140 րուբլու:

3. Վայելչագրութեան գաղափարներ, 4 ծալ, 24 երես: 6 հազար օրինակից կը լինի ծացած մօտ 4 հազար օրին., մօտ 500 րուբլու: . . . . . 10 կ.

4. Դուռնամատեանով տպած վայելչագրութեան վարժութիւններ, որ տպածի վրա սև թանաքով գրելով, գիւրութեամբ կարելի լինի ուղղել և գեղեցկացնել ուսանողի գրութիւնը: № 1—№ 5, Տասական թղթի գնով, ս. տօգան, կամ 480 թերթը, 4 րուբլի, մօտ 340 տօգ, մօտ 1360 րուբլու: Թերթը մի կողմից պակաս:

5. Տողաշարերներ տողացանցերը մեծ թաղաթ, 4 երես տպած, 6 հազար օրինակից մօտ 4 հազ. օրինակ կը լինի, մօտ 52 րուբլու, թերթը . . . . . 5 կ.

6. Կօմբ ուսուցչապետի և անգղիացոց Թագուհու բժշկի խնամատարութեան երեխայոց, 8 ծալ, եր. 300: . . . . . 15 կ.

1200 օրինակից մօտ 300 օրինակ կը լինի ծացած, մօտ 52 րուբլու:

Մի քանի այլ տպագրութիւններ մօտ 20 րուբլու:

Տպագրոյն ինքը բնակվում է Պետերբուրգ, Знаменская, домъ № 22, кв. № 7, на углу Басейной.

Վաճառվում է նոր հրատարակված «Ցիւնադի Տաիղո Ֆրէյդունի գրքոյկը պ. Զ. Գրիգորեանցի և Կնոտրօնական գրավաճառանոցներում: Գրքոյկի Գինն է 30 կ., գաւառներից ցանկացողները կարող են ուղղակի դիմել Պ. Յովհաննէս Սուքիասեանցին հետեւեալ հասցէով. Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджіанъ. на Петхайнской ул. собственый домъ № 13.

Դուբնակ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԳԱՆՁՈՒՆԴԱԿԱՆ ՀԱՄԱՐ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆԱՄԲ

Զայնագրութիւն և հրատարակութիւն Յովհաննէս Սուքիասեանցի: Իւրաքանչիւր օրինակի գինն է մէկ րուբլի: Վաճառվում է յօդուտ Վանայ ազգասիրական Թիֆլիսի բոլոր երաժշտական մագազիններում: Դուռնարող առևտրականներին զիջումներ կը լինի: Ստորագրագիրը գիմում են հետեւեալ հասցէով. Въ Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджанъ, на Петхайской улицѣ, собственый домъ № 13. Յանձնաժողովը սուսիալ միասին և «Յիսնադի Տաիղո երգարանը, պէտք է ուղարկին մէկ րուբլ երեսուն կոպ.:

Փետրվարի 12-ից ԲԱՑՎԱԾ խնան ՍՈՒՄԲԱՑՈՎի տանը ԿՈՆԴԻՏԵՐԻ և ՀԱՑԱՐԱՐԻ (пекарня) մագազին «ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ» վերնագրովը, որտեղ կը վաճառվին զանազան տեսակ խմորեղէններ, նոյնպես կը վաճառվին զանազան տեսակ կօնֆետներ արժան գնով. թէ փոքր և թէ մեծ քանակութեամբ ցանկացողները կարող են ստանալ ԻՒ ԳՈՐԾԱՐԱՆԵՒՑ: Օտար քաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցէով. СОЛОЛАКИ, ВЪ ВАРШАВСКОИ ПЕКАРНИ Мартиросу Ахназарову. Գաւառէրները կը կատարվին ամենայն ճշդութեամբ, գնողներին մեծ զիջումն անելով և փօստի ծախսը մեզ վրա առնելով. կօնֆետների գինը ֆունտը 40 կոպեկից մինչև 1 ր.:

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ, որ ՎԿԱՅԱԿԱՆ ունի և իմանում է ՌՈՒՍԱՑ, ՖՐԱՆՍԻԶԵՐԷՆ եւ ԳԵՐՄԱՆԵՐԷՆ լեզուները ԴԱՍԵՐ Լ՚ փնտռում: Հասցէն կ՚ԱՄԵՆԴԱՆՏԿԱՅԱՆ փողոց, տուն ՇԱԽՄՈՒՐԱԴՈՎի, № 23:

3—4 (2)

ՍԱԼԵԱՆԻՑ նոր ստացվեցաւ ԹԱՐՄ ՀԱՏԻՊԱԿԱՒՈՐ **ԹԱԽԻԵԱՔ**: Մասխմամբ է Մխքաչէկեան **ԿԱՄՈՒՐՋԻ** վրա, ՄԻՐՋՕԵՎի շինութեան մէջ № 11 և 12, Ա. ՄԻՐՈՒՄՕՎի խանութում:

2—6

Յունվարի 31-ին 1880 թ. Նորին Կայսերական Բարձրութիւն Կովկասի Փոխարքան բարեհաճեցաւ հաստատել «Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան» կանոնադրութիւնը: Այս ընկերութիւնը մարտի 9-ին ունեցաւ ընդհանուր ժողով, որը ընտրեց իւր վարչութեան և խմբագրական մասնաժողով:

Այն անձինք, որոնք կը ցանկանան ընկերութեան անդամ գրուել, կարող են դիմել ընկերութեան գանձապահ պարոն Մոսէսի Թատոսեանին Թիֆլիսի Առևտրական բանկում առաւօտեան 9-ը ժամից մինչև 2 ժամը: Իսկ այլ և այլ խնդիրներ և տեղեկութիւններ այդ ընկերութեան մասին ստանալու համար պէտք է դիմել ընկերութեան վարչութեան նախագահ պարոն Արշար Յովհաննիսեանին: Վարչութեան ատենադպիր Ա. Քիշմիշեան:

9—10

Տպագրութեան համար պատրաստ են «Փօն Կարլոս» (Հետաքննութիւն Շշմարտութեան) Պրէսկոտի, «Արրահամ Լինկօլն» սարուհներին ազատող Վիկտըմ Հօշմանի, և Մօլիէրի «Մոլոր նացողներին խրատ» հայերգմանութիւնները:

Թարգմանվում են Մօլիէրի հետ ՀՏարտիւֆ կամ Կեղծաւորս և Կեղծ հիւանդ կատակերգութիւնները:

Անցած փետրվարի 17-ից Նոտարական ատով վերջացնելով բոլոր գրամական հաշիւները իմ առևտրական ընկերակցութեան վերաբերութեամբ Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ՍԵՐԳԷՅ ԳՐԻԳՕՐԵՎԻՉ ԼԱԶԱՐԵՎի հետ, սրանով յայտնում եմ, որ եթէ մի որ և իցէ մարդու մօտ կը գտնվին ՄԵՆՉԵՒ ՆԵՐԿԱՅ ԹՒՒՐ, իմ Նրան տուած տոմսակները (росписки) մատնաւոր և բանկային վիճակներ, և բոլոր այդ տիպի պարտաւորագրերը և ակտերը, ես անվաւեր եմ համարում և ինձ պարտաւոր չեմ համարում վճարել:

Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ԴԱՆԻԷԼ ԱՐՏ. ԱԼԱՎԵՐԴՈՎ:

Дозволено Цензурою 11 Апрѣля 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Մխիթարեանի Типографія А. А. Михельсона